

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ, ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ՄԱՐԳԱՐԻՏԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 6-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ Մարգարիտա Սարգսյանս, աշխատելով որպես ՀՀ արդարադատության նախարարության քրեական օրենսդրության, քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչության փորձագետ, 2021 թվականի օգոստոսի 6-ից մինչև 2022 թվականի մարտի 6-ն ընկած ժամանակահատվածում կատարել եմ հետևյալ աշխատանքները.

➤ Մասնակցել եմ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական նոր օրենսգրքի նախագծի մշակման աշխատանքներին, որի շրջանակներում մասնակցել եմ մի շարք աշխատանքային քննարկումների:

➤ Կազմել եմ ՀՀ արդարադատության նախարարության կողմից միջազգային կառույցներին ուղարկվող պաշտոնական նամակների նախագծեր:

➤ Մասնակցել եմ ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի նախագծի վերաբերյալ հանրային քննարկումների:

➤ Ուսումնասիրել եմ միջազգային փորձ և ըստ այդմ՝ ներկայացրել եմ ամփոփ տեղեկանքներ և վերլուծություններ քրեական օրենսդրությանն առնչվող տարբեր իրավական հարցերի և հիմնախնդիրների կապակցությամբ, մասնավորապես.

- ազատությունից զրկված անձանց առողջության պահպանում քրեակատարողական հիմնարկներում և բժշկական կազմակերպություններում,
- դատապարտյալների կողմից կատարվող աշխատանքի կազմակերպում և դրա առնչությամբ պատիժը կրելու ռեժիմի փոփոխություններ,

- քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց կրթության, աշխատանքի կազմակերպման, քրեակատարողական հիմնարկների այլ գործառույթների մասնավորեցում,
- ազատությունից զրկված անձանց բժշկական սպասարկում և դեղորայքային ապահովվածություն,
- քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց հետ սոցիալական, իրավական, հոգեբանական աշխատանքների իրականացում,
- կալանավորված անձանց և դատապարտյալների կողմից կատարվող ինքնավնասումների, ինքնասպանությունների կանխարգելում, քրեակատարողական հիմնարկներում մահվան դեպքերի նվազեցում,
- պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման մոդելներ,
  - Պատասխանել եմ քաղաքացիներից (այդ թվում՝ դատապարտյալներից և կալանավորված անձանցից), հասարակական կազմակերպություններից, պետական մարմիններից, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից ստացված ընթացիկ գրություններին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



ՄԱՐԳԱՐԻՏԱ ՍԱՐԳՍՅԱՆ

04.03.2022թ.